*112 Տր յակոբ յամթեցի (Գ)*[1]

*113 Տ̃ր նիկողայոս (Ա) սպարկերտցի, ի գեղջէն լուարայ ի տանէն մեծի սևոնց գրիգորի. այր իմաստուն հռետոր. հին և նոր կտակար̃նց*[2] *և արտաքնոց. իսկ բազում աշխատանս*[3] *կրեաց ի յաթոռս և ետ ասմաւուրք*[4] *մի, ոսկիան ա̃ծաշունչ մի, հարցմանց մի ի ս̃բ աթոռս յշ̃տկ. թվի հայոց է ռ̃ճ̃ղ̃ին։*

*114 Տ̃ր գրիգոր (Ժ), 115 Տ̃ր թոմայ (Գ) յաղթամարցի էր ի ցեղէն գագիկ թագաւորին։*

*116 Տ̃ր կարապետ (Գ) ղուրմֆասմենց.*

**43է** *117. Տ̃ր յովաննէս սպարկերկցի (Թ)*[5]

*118 Տ̃ր միքայէլ (Գ)*[6] *վանեցի և էր յոյժ երաժիշտ.*

*119 Տ̃ր կարապետ (Դ) շ̃տխցի. այր յոյժ ողորմած.*

*120 Տ̃ր խաչատուր (Բ) վանեցի. էր այր առաքինի, ս̃բ։*

*121 Տ̃ր «յարութ̃»*[7] *արտօնեցի. սա նահատակեցաւ ի խզնայ ս̃բ խաչն թվին ռ̃մ̃հ̃բ̃ յաւագ ե̃ շաբաթի, զի որպէս տ̃րն մատնեցին ի ձեռն հրէից, սոյնպէս ապարանից վանից վանահայրն մատնեաց զնա ի ձեռն անօրինաց.*[8] *սպանեցին յաւուրս աւագ ուրբաթի. պատճառն այս էր, զի այն վանահայրն բ̃ կին առեալ էր. իսկ*[9] *«հայրապետն» անգօսնեաց զնա վ̃ս*[10] *կանացն,*[10] *նա վ̃ս նախանձու եղ նահատակել զկ̃թկոսն. յետ կատարման ճառագայթեցաւ լոյսն ի վ̃ր «մարմնոյ» նորին։*

---

1 Զ. (Բ)

2 Զ. գտակարն̃ց.

3 Զ. ախատանս, *հմ. էջ՝ 60* ախատանք.

4 Զ. *յետագայում* ս-*ից յետոյ աւելացրած* յ (ասյմաւուրք).

5 Զ. *(Զ).* 6 Զ. *(Բ).*

7 *Սոյն անձի առթիւ Զ.ի լուսանցքում կայ հետևեալը. «կարմրաձիր արձանն որ ի վ̃ր անուան, շնանակէ (=նշանակէ) զնահատակիլն երջանիկ կ̃թկոսին»։*

8 Զ. *տղմ.* 9 Զ. *տղմ.*

10 Զ. վ̃ս կանացն *տղմ.*